

ԴԵԼԶՆՈՒՏԻ ՎԱՆՔԸ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

§ 1. Դեղձնուտի վանքը պատմական Կապենո գավառի կամ Սևորդյաց Կրկրի¹, ալժմյան Իջևանի շրջանի կարևոր և գեղեցիկ հուշարձաններից մեկն է:

Հուշարձանների այդ խումբը գտնվում է Գետաշեն գյուղից հարավ-արևմուտք, մոտ 14—15 կիլոմետր հեռավորությամբ, անտառապատ մի լեռնալանջի վրա:

Ավտոմեքենաների երթևեկության հարմարեցրած գյուղամիջյան ճանապարհը Իջևանից Աղստաֆա տանող ասֆալտապատ խճուղուց՝ Մուս կամուրջի (Кривой мост) մոտից՝ թերվելով դեպի ձախ, անցնելով Սև քար, Սըռի և Մաղկավան գյուղերի միջով, տանում է Գետաշեն գյուղը, որը գտնվում է պատմական Կունեն գետակի ձորաբերնի ձախ ափին:

Կունեն գետակի ձորը հնում խիտ բնակված է եղել: Այդ գետակի ճյուղավորված ձորերում են գտնվում Հին Կունեն, Առաքելոց, Մասրուց թաղ և Դեղձնուտի գյուղատեղերը, Աստվածածնի եկեղեցին, Առաքելոց ամրոց-վանքը, Կիրանց, Դեղձնուտի և Սամսոնի վանքերը և Բերդաբար բերդը:

Գետաշենից ճանապարհը Կունենի ձախ ափով թեքվում է դեպի հարավ-արևմուտք և խորանում անտառապատ լեռների մեջ: Քանի գնում ձորը նեղանում է, գյուղից մեկ կիլոմետր հեռավորությամբ ճանապարհին անցնում է Հին Կունենի, իսկ դրանից մոտ 2,5 կիլոմետր հեռու՝ Առաքելոց գյուղատեղի միջով, որից մոտ 6 կիլոմետրի վրա հասնում է Չայ-դոշանի կամուրջին: Այս կամուրջից քիչ ցած, Կունեն գետակին է միանում Սամսոնի ջուրը կամ խնձորկուտի վտակը: Ճանապարհը Չայ-դոշանի կամուրջի մոտ ճյուղավորվում է: Մինչ դրա գլխավոր ճյուղը, պահելով իր նախկին ուղղությունը, ևս ավելի խորանալով լեռների մեջ, տանում է

դեպի Կիրանց վանքը, ձախ ճյուղավորություն, անցնելով Չայ-դոշանի կամուրջը, թեքվում է դեպի հարավ և կամուրջից քիչ հեռու նորից երկուսի է բաժանվում: Երկու ճանապարհն էլ, մոտ 4 կիլոմետր գնալով, մոտենում են Դեղձնուտի վանքին, մեկը հյուսիսից, իսկ մյուսը՝ հարավային կողմից: Դրանցից առաջինը դեպի աջ, անտառապատ սարի գագաթներ լանջով, դեպի յայլանները տանող սալլի ճանապարհն է, որը չորս կիլոմետրի վրա մոտենում է Դեղձնուտի գյուղատեղին, որից մնացած անշուք մատուտի ավերակները և գերեզմանատունը գտնվում են ճանապարհի ձախ եզրին: Հիշյալ գերեզմանատան միջով մի կածան տանում է մոտ քառորդ կիլոմետր հեռու գլխավոր վանքը:

Չայ-դոշանի կամուրջն անցնող ճանապարհի երկրորդ՝ ձախ՝ ճյուղավորությունը, որը հարմարեցված է ավտոմեքենաների երթևեկության, անցնում է խնձորկուտի ձորով: Այդ ձորը մեր երկրի ամենանեղ, խոր և իր բնական գեղեցկությամբ աչքի բնկնող վայրերից մեկն է: Խնձորկուտի ձորի աջափնյա քարափների ծերպին է թառած Բերդաբար ամրոցը², որի դիմաց, ձախափնյա լեռնալանջին է գտնվում Դեղձնուտի վանքը:

Այս կողմից Դեղձնուտի վանքը կարելի է գնալ դեպի Հաճարկուտ անտառամասը տանող մի աննշմարելի կածանով, որի գոյությունը նույնիսկ տեղացիներից շատ քերին է ծանոթ: Այդ մի կիլոմետր տարածության առաջին կեսը շատ դիք է և անցնում է մա-

2. Հակական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագրի» 1952 թվականի 8-րդ համարի 120 էջում Վ. Հակոբյանն իր «Դավիթ Քորայրիցու հիշատակարանը» հոդվածի 1 ծանոթության մեջ հայտնում է, որ Ս. Երեմյանը «Մահկանաբերդի Արժույթները» անտիպ աշխատությունում Բերդաբարը նույնացնում է պատմական Մահկանաբերդի հետ:

1. Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի Իջևանի շրջանի «Ուղեցույց», Երևան, 1947 թ., էջ 51:

ցառների, թփերի և ժառերի միջով: Փոխաբերեն՝ սկսած Հաճարկուտից՝ կածանի երկրորդ կեսը շատ գեղեցիկ է: Այս տեղից բացվող լեռնային անտառի ճոխ և չքնաղ տեսարանները անցորդին մոռացություն են տալիս կածանի առաջին կեսին քաշած նեղությունը: Դեղձնուտ գնալու համար արժե այդ գծով գնալ, սակայն անպայման տեղին ծանոթ մեկի առաջնորդությամբ, եթե ոչ առանց դրա հիշյալ կածանը և դրա ուղղությունն անտառում դժվար է ճարել:

Չայ-դղանից դեպի Դեղձնուտ տանող առաջին ճանապարհն էլ իր սկզբի մեկ երրորդով խիստ զառիվեր է, բայց այդ գծով կարելի է գնալ սայլով կամ գրաստով:

Ճանապարհների այս դժվարությունները, դրան ավելացրած և հեռավորությունը, թերևս այն հիմնական պատճառներն են, որ Դեղձնուտի վանքն ամենից քիչ այցելվող հուշարձաններից է: Նույնիսկ մեղվաջան բանասեր Ջալալյանը, իջևանի շրջանում կատարած իր ճանապարհորդության ժամանակ, սիրտ չի արել այդ վանքն այցելելու:

Այդ բոլորից հետո զարմանալի չպիտի թվա, որ այս գողտրիկ հուշարձանը մինչև օրս չավ չի ուսումնասիրվել և մեր նոր գրականության մեջ միայն Մակար եպիսկոպոս Բարխուդարյանի մի քանի չոր ու ցամաք տողերն ունենք («Արցախ», էջ 380—381) և Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի ուղեցույցի հակիրճ նկարագրությունը (էջ 15—16), իսկ միջնադարի պատմագիրներից այդ հուշարձանի մասին ոչ մեկը հիշատակություն չունի:

§ 2. Դեղձնուտի վանքի կազմությունը շատ պարզ է և շենքերի թիվը քիչ: Հուշարձանների գլխավոր խումբը բաղկացած է եկեղեցուց և արևմտյան կողմից դրան կից կառուցված ժամատնից: Գլխավոր եկեղեցու հյուսիսային կողմում, 4—5 մետր հեռավորությամբ, կա ևս մի երկրորդ եկեղեցի, որ կիսամշակ քարերից կրաշաղախով շինված, սովորական, գուլաղական եկեղեցիների տիպի մի թաղապատ, հասարակ շենք է, որը գրավիչ որևէ բան չունի: Հուշարձանների գլխավոր խմբի հյուսիս-արևմտյան կողմում, մի քանի մետր հեռավորությամբ, անմշակ քարերից շինված, վանքի միաբանության բնակելի և օժանդակ շենքերի ավերակներն են, ամբողջովին ծածկված մացառով, եղինջով և այլ բարձր մոլախոտերով: Սրանով վերջանում է այդ վանքի բաղկացուցիչ մասերի թվարկումը, եթե չհաշվենք հուշարձանների շուրջը գտնված տապանաքարերը, որոնք ուշագրավ որևէ բան չունեն:

Վանքը շինված է անտառապատ լեռան դեպի արևելք թեքվող լանջի վրա, մի բացու-

տում: Եթե չլինեին հիշյալ կողմում բուսած բարձր ծառերը, այդ տեղից կերևար Կոնեն գետի ընդարձակ ձորի տեսարանը: Այնպես որ այստեղ էլ պահպանված է մեր վանքերի մեծամասնությանը հատուկ գեղեցիկ և լայն հորիզոն ունեցող տեղադրական հատկանիշը:

Վանքի հյուսիսային կողմի ձորակի ժայռերի արանքից մի փոքրիկ ու սառնորակ աղբյուր է բխում, իսկ հարավային ձորակով հոսում է անտառային վտակը:

§ 3. Գլխավոր եկեղեցին և ժամատունը

շինված են դեղնավարդագույն և բաց մոխրագույն կարծր, օրբատաշ քարերից: Դրանցից եկեղեցին փոքր չափերի մի շենք է — 10,1 × 8,5 մետր՝ դրսից հաշված, պատերի հաստությունը՝ 77—80 սանտիմետր: Ունեցել է կլոր թմբուկավոր գմբեթ: Արտաքուստ՝ հարավային, արևելյան և հյուսիսային պատերի մեջ կան զույգ անկյունավոր նիշեր, գեղեցիկ ձևավորված դադաթներով, երկուսն էլ դեկորատիվ կիսասյուների շրջանակի մեջ: Կիսասյուների խոյակներից բարձրացող կիսադաշնները, ուղիղ անկյունավոր մի քանի բեկումներով մոտենում են իրար և միանում նիշերի դադաթներից վեր: Շատ գեղեցիկ ձևավորված են արևելյան պատի հյուսիսային և հարավային պատերի հետ միացող անկյունները: Այդ անկյուններում մեկ քառորդով պատերի կից քանի միացած գլան է դրված, երկու կողմից ձգվող կիսափուլակների շարանի մեջ: Դրանցից քիչ հեռու, հարակից պատերի վրա տեղավորված են մեկական դեկորատիվ կիսասյուներ, որոնց խոյակների վրայից բարձրացող կիսադաշններն ուղիղ անկյան տակ վեղարած և միանում են իրար: Նման ձևավորում ունի Գոշավանքի Գրիգոր Լուսավորչի անվան փոքրիկ և գեղեցիկ եկեղեցին: Թե՛ այս և թե՛ այլ մանրամասնությունները հավանական են դարձնում այն ենթադրությունը, որ կառուցման ժամանակով իրար մոտիկ այս երկու հուշարձաններն էլ միևնույն ճարտարապետի գործն են: Դեղձնուտի վանքի արտաքին ձևավորման թերևս ամենագեղեցիկ մասը նրա միակ՝ արևմտյան՝ դռան է: Մուտքի բացվածքը երկու կողմից եզերված են կիսադաշններից կազմված կարճ, մեկական կիսասյուներ, որոնց խոյակների վրա է հենվում դռան ճակատաքարը շրջանցող եռանիստ, ստալակտիտային քանդակներ ունեցող, երկկենտրոն կամարով: Քանդակազարդ մի շերտ, բարձրանալով կիսասյուների խորիսկներից, ուղիղ անկյան տակ բեկվելով, ծածկում է կիսասյուների խոյակների ճակատը: Այս ամենն առնված է երկշերտ, բուսական և երկրաչափական նուրբ քանդակներ

ունեցող, ուղղանկյուն մեծ շրջանակի մեջ: Այդ քանդակագործ շերտերից ներսի կողմինը վեցթևյան գեղաքանդակ աստղերի շարան է: Ներսից, հյուսիսային և հարավային պատերի մեջտեղից 1,5 մետր իրար դեմ և արսիդի երկու կողմից ելնող ելուստները կամարներով միանում են իրար, իրենց վրա երկվով գմբեթի ծանրությունը: Այդ ելուստների ճակատները, ինչպես և արևմտյան պատի վրա, մուտքից դեպի աջ և ձախ, անկյունավոր կիսասյուներով են զարդարված: Արևմտյան պատի վրայի կիսասյուները ցածր կամարներով միացած են հյուսիսային և հարավային պատերին կից կառուցված ելուստներին, այդ պատերի մեջ կազմելով լայն խորշեր: Շինարարական արվեստի տեսակետից ուշագրավ է այդ կամարների քարերի իրար միացումը: Քարերի իրար կցվող կողմերը 4 տառի ձևի հակադիր տաշվածք ունեն և հագցված են միմյանց մեջ: Բնմը բարձր է և երկու կողքերից ունի երկհարկ խորաններ, որոնցից վերի հարկում եղածների մուտքը աստիճաններով բացված է բեմի մեջ: Լուսամուտները թվով քիչ են, նեղ և երկար:

Առհասարակ այս փոքրիկ հուշարձանը գեղեցիկ է և գրավիչ: Ուշադիր դիտողի համար մերթ այստեղ և մերթ այնտեղ այնպիսի ուշագրավ մանրուքներ են աչքի ընկնում, որոնցով չի կարելի չհիանալ: Հատկապես նշելի են՝ դրսից՝ արևելյան պատի վրայի և դեկորատիվ կիսասյուների խոյակների ինքնատիպ քանդակները և մուտքի ներսի կողմից դրված երկրորդ ճակատաքարը, որը հենվում է դռան բացվածքի վերի անկյուններում տեղավորված հատուկ անկյունավոր կալունակների (КРОШТЕЙН) վրա, որի նմանը ուրիշ տեղ մեզ չի պատահել:

Ժամատունը, որը դրսից $12 \times 11,5$ մետր չափեր ունի, նույնպես արտասովոր կառուցվածք ունի: Պատերին կից, 80—95 սանտիմետր դեպի դուրս դրված կարճ մուլթերի վրայից բարձրացող չորս կամարները կենտրոնում կազմում են երդիկի բացվածքը: Հյուսիսային և հարավային պատերը, մուլթերի խոյակների գծից քիչ վերև, կորած և թեղված են դեպի շենքի երկարությամբ ձգվող կամարները, որով ամբողջ շենքը օրորոցի ձև է ստանում: Հյուսիսային և հարավային պատերի մուլթերի մեջ եղած հատվածը, հիշյալ գծից վերև, ոչ թե հորիզոնական գծով է շարված, այլ կորած, ըստ որում շարքերի ստորին եզրերը 1,5—2 սանտիմետր դուրս են դրված ցածի շարքերի վերին գծից:

Ժամատունն ունի երկու մուտք, որոնցից գլխավորն արևմտյան պատի կենտրոնում է, դրսից քանդակագործ շրջանակի մեջ առնված, իսկ երկրորդը՝ հյուսիսային պատի

մեջ, հյուսիս-արևմտյան մուլթին կից, որը տանում է դեպի բնակելի շենքերը և թվում է թե հատկապես միաբանության անդամների երթևեկության համար է շինված: Հարավային պատի արևելյան կիսում կա մի լուսամուտ, մեջտեղից փոքրիկ, անկյունավոր սյունիկով, երկու մասի բաժանված:


Ժամատան ներսում ուշագրավ և կարևոր են, մի ավազաքարե, մի քանի տեղից կոտրված տապանաքար, որը գտնվում է շենքի կենտրոնական մասում, և ունի մոտ 20 սանտիմետր երկարությամբ գեղեցիկ և իրար հագցրած գրերով տապանաքար, և մի շատ գեղեցիկ մեծ խաչքար: Այս երկուսն էլ կապ ունեն Դեղձնուտի հուշարձանների կառուցողի և շինության ժամանակը որոշելու խնդիրների հետ: Խաչքարը, որը մեր բարձրաքանդակ խաչքարերի մեջ լավագույններից մեկն է, մոտ 2 մետր երկարությամբ և 1 մետր լայնությամբ ունի: Քանդակները մոտ 5 սանտիմետր բարձրությամբ ունեն, և կատարված են մեծ ճաշակով և վարպետությամբ: Այս խաչքարը կանգնեցված է եղել ժամատան մեջ բացվող եկեղեցու մուտքից ձախ գտնվող պատվանդանի վրա: Անհայտ պատճառով պատվանդանից ցած ընկնելու հետևանքով, դժբախտաբար, բազմաթիվ մեծ ու փոքր կտորների և փշուրների է վերածվել: 1948 թվականին Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի կողմից այս հուշարձանները մաքրելու աշխատանքի ժամանակ, խաչքարի կտորները և փշուրները խնամքով հավաքել և երեսն ի վեր տեղավորվել են ժամատան հատակին, հողաթմբի շրջանակի մեջ: Ցավոք, այդ աշխատանքի ժամանակ չհաջողվեց բոլոր փշուրները գտնել, որով վրայի մեծ կարևորություն ունեցող արձանագրությունը լրիվ վերծանելու հնար չեղավ:

Այս արժեքավոր հուշարձանները, չնայած կառուցողների հատուկ խնամքին, չեն դիմացել բնության քայքայիչ ուժերին: Երկրաշարժներից և այլ պատահարներից փլել է եկեղեցու գմբեթը, որի թմբովի հյուսիսային մասն է մնացել միայն կանգուն, քանդվել է ժամատան տանիքը, ճաքել և խարխվել են եկեղեցու պատերը, թափվել և տեղից շարժվել են բոլոր պատերի վերին շարքերի քարերը, քանդվել են նաև տանիքի ծածկի և հատակի սալերը: Աստիճանաբար անտառն ամեն ինչ կլանելու վրա է:

§ 4. Հուշարձանների այս խմբի իսկական անունը հայտնի չէ: Դրա մասին պատմական որևէ հիշատակություն ցարդ չի հայտնաբեր-

ված: Պահված վիմագրության մեջ հիշատակվում է «ուխտ» բառը, առանց անունը տալու: Կանգ չենք առնում «Դեղձնուտ» անվան բացատրության շուրջ, որովհետև ոչ դրա պատմական լինելն է հայտնի, և ոչ էլ բառի ճիշտ մեկնաբանությունը, թեև «դեղձ» և «դաղձ» արմատներից որոշ ենթադրություններ են արվում:

այն է, որ ոչ ոք չի զբաղվել այդ խնդրով, և մեկ էլ այն, որ ցարդ վերծանված չի եղել ժամատան միջի՝ այժմ ջարդված՝ խաչքարի վրա պահված արձանագրությունը, թեև այդ արձանագրությունը կարևոր տեղերում՝ փշրվելու հետևանքով՝ բացեր ունի, այնուամենայնիվ պահված մասերը բավական են տվյալ երկու հարցերին էլ բավարար պա-



Դեղձնուտի վանքի եկեղեցու մուտքը

§ 5. Բանասիրության մեջ, ներառյալ Պատմական հուշարձանների պահպանության կոմիտեի «Ուղեցույց»ը, հայտնի չեն ոչ հուշարձանների շինողի և ոչ էլ դրանց կառուցման թվականները: Թերևս դրա պատճառն

տասխան տալու համար: Բերենք № 2 արձանագրության 11—34 շարքերի բնագիրը, մեր լրացումներով. «...[Ես Ա]ռաքելս նուստ սպասաւոր բանին [Աստուծոյ]..... [Երկր]էն Կիլիկո ի գաւառէն Տարսոնի, կամ[ակցու-

թեամբ].... այս շինեցաք զէկեղեցիս ամենայն պատրաստութեամբ և զգալիս և կանգնեցաք զսուրբ նշանս աստուածընկալ, ի նեղ ժամանակի, դառն աշխատութեամբ, [բարե]խաւս մեզ [և] ծնողաց մ[երոց].... և պարոնին և զաւակաց նորա, որ եղև ձեռն[ն] տու և մխիթար կենաց մերոց, [յ]արքեպիսկոպոսութեան Հաղբատու տէր Յովանես[ի], որ է հեզ և մարդասէր և մեր յոյս: Թվում է թե որևէ առարկություն չի կարող լինել «Առաքել» անվան նկատմամբ, որից միայն առաջին Ա գիրն է պակասում, որը մենք դրել ենք 10-րդ շարքի վերջում և ոչ էլ այդ Առաքելի վարդապետ լինելու նկատմամբ, որովհետև նա իրեն համարում է ճշմարտ սպասաւոր բանին [Աստուծոյ]: Առաքել վարդապետի անունը հիշատակվում է նաև № 4-բ՝ Ասիլի՝ ՉեԱ թվակիր արձանագրության մեջ, իբրև ուխտի առաջնորդ: Բացի այդ, ժամատան մեջտեղում գտնվող ավազաքարե տապանաքարի վրա կա «Առքի հռչակաւոր վարդապետի» անունը: Այստեղ անունը վերծանում ենք «Առաքելի» և այդ տապանը համարում վանքը կառուցող Առաքել վարդապետինը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդպիսի պատվավոր տեղում կարող էր թաղված լինել միայն վանքի համար մեծ ծառայություն արած մեկը՝ դրա կառուցողը: Այս բոլորից եզրակացնում ենք, որ եկեղեցու, ժամատան (արձանագրության մեջ՝ զավիթ) և վիմագիր մեծ խաչքարի շինողը եղել է Կիլիկիայի Տարսուսի գավառացի Առաքել վարդապետը, որը տեղական իշխաններից (պարոն) մեկի, որի անվանադիրը արձանագրության մեջ ջարդված է. կամակցությունում և ձեռնտվությամբ (որովհետև այդ «պարոն»-ի և նրա զավակների համար բարեխոս է համարում կանգնեցրած խաչը և բացի այդ հիշատակում է, որ նա՝ պարոնը՝ եղել է ձեռնտու, — պետք է հասկանալ շինության գործում, — և կյանքի մխիթարիչ), Հաղբատի Հովհաննես արքեպիսկոպոսի³ առաջնորդության ժամանակ, և որ այդ Առաքել վարդապետը մեռել է ՉեԱ (741=1292) թվականից հետո և թաղվել իր շինած ժամատան մեջ:

§ 6. Դեղձնուտի վանքի հուշարձանների (եկեղեցու, ժամատան և մեծ խաչքարի) շինության ժամանակը որոշելու համար մենք ունենք վիմագրության մեջ պահված հետևյալ տվյալները.

3. Հուշարձանների շինության թվագրությունների հաշվով այս Հովհաննես արքեպիսկոպոսը պետք է լինի Համազասպից հետո առաջնորդող Հովհաննեսը, որը շինել է Հաղբատի սրահները և դրանցից մեկում կանգնեցրել գեղեցիկ, պատկերաքանդակ խաչքարը:

ա. Եկեղեցու ներսում, հյուսիսային պատի վրա փորագրված Չէ Շ գրերը, որոնցից առաջին երկուսը համարում ենք թվագիր, իսկ վերջինը վերծանում իբրև «շինեցաւ»:

բ. Մեծ խաչքարի վրայի արձանագրության վերջի շարքում պահված ՉիԳ գրերը, որոնք ըստ տեղագրության, մեր կարծիքով, միայն թվագիր կարող են լինել:

գ. Ժամատան թվագիր ունեցող արձանագրություններից ՉիԾ՝ ամենից վաղ՝ թվագիրը (արձանագրություն № 5), որը տալիս է 1276 թվականը:

Դրանցից վերջին թվագիրն ապացույց է, որ 1276 թվականին արդեն ժամատունը պատրաստ էր և այսպիսով մեծ խաչքարի արձանագրության վերջի ՉիԳ գրերը թվագիր ընդունելուն չեն հակասում, այլ հաստատում են մեր ենթադրությունը, ըստ որի շինարարությունն ավարտելու և խաչքարը կանգնեցնելու ժամանակը կլինի 1274 թվականը:

Սակայն 1274 թվականը չի կարող միաժամանակ լինել և եկեղեցու շինությունն ավարտելու թվական, որովհետև եկեղեցու և ժամատան շենքերն օրգանապես իրար հետ կապված չեն, և պարզ երևում է, որ եկեղեցու շենքն ամբողջովին վերջացնելուց հետո միայն դրան կցվել է ժամատան շենքը. որով վերջինի ընդերկալական պատերի արևելյան ծայրերը և արևելյան մուկթերն ու դրանց վրայից բարձրացող կամարները որոշ տեղերում ծածկել են եկեղեցու արևմտյան պատի ձևավորված քարերը: Իսկ թե ե՞րբ է շինվել եկեղեցին, մեր կարծիքով, այդ ցույց են տալիս վերը՝ ա կետում հիշված Չէ գրերը, որոնք իբրև թվագիր ընդունելու դեպքում կստանանք 1258 թվականը: Այդ թվականը պետք է լինի ոչ թե եկեղեցու շինության ավարտելու, այլ ոկսելու թվական: Նման դեպք մենք նկատել ենք նաև Ալավերդու շրջանի Թումանյան գյուղի մոտի Բարձրաքաշ վանքում⁴: Տվյալ դեպքում հիշյալ գրերի անսովոր տեղը և կրճատությունը վկայում են, որ դրանք դրված են ծանոթության կարգով և այն էլ շինարարության սկզբում, կամ ավելի հիշատակված շինարարական աշխատանքը լուսամուտի գծին հասցնելու ժամանակ:


Ամփոփելով հուշարձանների շինության ժամանակի հարցը, գալիս ենք հետևյալ եզրակացության: Եկեղեցու շինարարությունը սկսվել է 1258 թվականին, իսկ ժամատան շինարարությունն ավարտել է 1274 թվականին, որով ամբողջ կոմպլեկսի կառուցումը

4. Տե՛ս «Էջմիածին» ամսագրի 1951 թվականի հուլիս-օգոստոս համարում, էջ 59:

տեկել է 16—17 տարի, ըստ որում եկեղեցին ավարտելու և ժամատան շինությունը ձեռնարկելու միջև որոշ ժամանակ ընդմիջում է եղել:

§ 7. Դեղձնուտի վանքի շինությունը կատարվել է մոնղոլների տիրապետության

կանին Հայոց առաքեաց Մանգուղան, և մեծ ղորավարն Բաթու, զայր մի ոստիկան, Արղուն անուն, որ ի Գիուգ զանէն առեալ էր հրաման վերակացութեանն հարկացն արքունի ի հնազանդեալ աշխարհացն... հանդերձ այլովք բազմօք, որ ընդ նոսա, աշխարհագիր



Դեղձնուտի վանքի արևելյան ճակատը

սկզբնական շրջանում, երբ երկիրը դեռևս խորեզմշահ Զալալեդինի վաշրագություններից աչք չբացած, ուռնակոխ եղավ Նետողաց ազգի հորդանների ձիերի սմբակների տակ, և ապա սխտեմատիկաբար կողոպտվեց և կեղեքվեց Արղուն և Բուղա ոստիկանների և նրանց նման հարկահանների ձեռքով: Այսպես է նկարագրում պատմիչ Կիրակոս Գանձակեցին երկրի դրությունն այդ ժամանակաշրջանում. «Արդ յեօթն հարիւր և երեք թուա-

առնել յամենայն ազգս, որ ընդ ձեռամբ նոցա էին հնազանդեալ, և նոցա առեալ զայս հրաման, ելին ընդ աշխարհս ամենայն կատարել զգործն, հասին և յաշխարհս Հայոց և՛ Վրաց և՛ Աղուանից, և որ շուրջ գնդօք գաւառք, սկսեալք ի տասնամենից և ի վեր ընդ գրով համարոյ արկանել զամենեւին, բաց ի կանանց: Եւ յամենեցունց պահանջեալ խըստագոյն հարկս, աւելի քան զկար մարդոյն,

և սկսան չքաւորիլ. և նեղէին անհնարին կտտանօք և շարշարանօք և գելոցօք. և որ թագէր՝ ըմբռնեալ սպանանէին, և որ ոչ կարէր հատուցանել զսակն՝ զմանկունս նոցա առնուին ընդ պարտուցն, քանզի Պարսիկ Տաճկահաւատք սպասաւորօք շրջէին: Այլ և իշխանքն տեսաք դաւառացն նոցուն գործակից լեալ ի նեղելոցն և ի պահանջելն վասն իրեանց շահելոյ. և այսու ոչ բաւականացան, այլ և զամենայն արուեստագէտս, եթէ ի քաղաքս և եթէ ի գիւղս, զամենայն ի հարկի կացուցին: Այլ և զծովակս, և զլիճս ձկնորսաց, և զերկաթահանս, զգարբինս, և զշապարաւս, և զի՞ պիտոյ է մանրամասնաբար ասել, զամենայն դուռն շահից հատին ի մարդկանէ, և ինքեանք միայն շահէին...»⁵ Այսպիսի պայմաններով է շինվել Դեղձնուտի վանքը և շինող Առաքել վարդապետը «ի նեղ ժամանակի, դառն աշխատութեամբ» հակիրճ խոսքերով է բնորոշում ժամանակի և շինարարութեան պայմանները:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ մինչ Հայաստանը, Դեղձնուտի վանքի շինութեան ժամանակ, այդպիսի ծանր դրութեան մեջ էր, իսկ նույն ժամանակամիջոցում՝ Հեթում Ա-ի օրոք (1226—1270 թ. թ.), Կիլիկիայի հայութիւնն անկախ պետութիւն ունէր, որ հոգեւոր դասը պետութիւնից և իշխող դասից ամեն տեսակի օժանդակութիւն էր ստանում, ընդարձակ կալվածների և մեծ եկամուտի տեր էր, Կիլիկիցի Առաքել վարդապետը, իր երկիրը թողած, Հայաստանի լեռնաշխարհի հեռավոր մի անկյունն է ընտրում վանք շինելու համար: Կարծում ենք, որ այստեղ բացի բուն Հայրենիքի նկատմամբ նրա ունեցած ըզձանքից, մեծ դեր է խաղացել այն հանգամանքը, որ պետութեան ղեկը Հեթումյանների դինաստիայի ձեռքն անցնելուց հետո, Կիլիկիայում ուժեղանում է Հռոմի պապի գերիշխանութիւնն և հռոմեադավանութիւնն ընդունելու այն հոսանքը, որ դրանից առաջ էլ կար, ոչ միայն իշխող դասի, այլև հոգևորականութեան մեջ: Այս հոսանքի զլխավոր դրդապատճառը Կիլիկիան օղակող մահմեդականութեան դեմ Եմրոպայից օժանդակութիւն ստանալու այն խարուհի և խաբեական խոստումներն էին, որ պարբերաբար և ամեն մի առիթով արվում էին թե՛ Հռոմի պապերի և թե՛ Եմրոպայի մի շարք պետութիւնների կողմից, որը՝ վերջ ի վերջո՝ Կիլիկիայի հայոց թագավորութեան

կործանման հիմնական պատճառներից մեկը եղավ⁶:

Ճիշտ է, մոնղոլների անմիջական ծանր լծի տակ Հայաստանում կյանքն անհամեմատ ավելի վատ էր, բայց այստեղ հոգևորական դասը և եկեղեցին, համաձայն 13-րդ դարի պատմիչներ Կիրակոս Գանձակեցու⁷ և Ստեփանոս Օրբելլանի⁸ վկայութիւնների, ազատ էին հարկերից, հետևապես որևէ հալածանք չէին կրում. ուրեմն այս հանգամանքը պետք է լինի այն զլխավոր պատճառը, որ Առաքել վարդապետը, Կիլիկիայից հեռանալով, Սևորդաց հեռավոր ձորերից մեկում է շինել իր վանքը:

§ 8. Անդրադառնալով Դեղձնուտի վանքի վիճակագրութեանը, պետք է ասել, որ դա՝ ըստ քանակի՝ բավական աղքատ է: սակայն ուրիշ վանքերի վիճակագրութիւնների համեմատութեամբ թվագրութեամբ հարուստ է, որովհետև պահված 12 արձանագրութիւններից 5-ը թվագիր ունեն: Բացի այդ՝ ինչպես տեսանք՝ այդ թվագրերն օժանդակում են վանքը շինողի ու լինելը և շինութեան ժամանակը գտնելուն: Այս տեսակետից Դեղձնուտի հուշարձաններն իրենց հարևանութեան մեջ գտնվող վանքերից (Կիրանց, Առաքելոց, Մաղարավանք, Սրվել) ավելի բարեհաջող վիճակում են գտնվում:

Վիճակագրութեան մեջ ուշագրավ է նաև № 4-ը, Միջագետքից եկած ոմն Ասիլի արձանագրութիւնը: Մեր կարծիքով դա սովորական ուխտավոր չի եղել, որովհետև ժամանակի պայմանները բնավ նպաստավոր չէին այդքան հեռու տեղից ուխտագնացութեան գալուն: Ամենայն հավանականութեամբ, դա մեկն է եղել այն վաճառականներից, որոնք, շնորհիվ իրենց քսակի ուժի, ազատ երթեկում էին Արևմուտքից Արևելք և հակառակ ուղղութեամբ: Այդպիսի մի վաճառականի մասին, որի անունը Ումեկ էր և որը մոնղոլների կողմից նույնպես Ասիլ էր կոչվում, մանրամասն պատմում է Կիրակոս Գանձակեցին (էջ 349):

Ի վերջո կարևոր է նշել, որ Դեղձնուտի վանքի բոլոր արձանագրութիւններն էլ առաջին անգամ են հրատարակվում:

6. См. Г. Г. Микаелян, История Киликийского армянского государства, Ереван, 1952 г., էջ 482 և այլ տեղերում:

7. Կիրակոսի Գանձակեցու Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909 թ., էջեր 350 և 353:

8. Ստեփանոս Օրբելլանի Պատմութիւն Հնահայերի Սիսական, Թիֆլիս, 1910 թ., էջ 411:

5. Կիրակոսի Գանձակեցու Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1909 թ., էջ 348—349:

ԴԵՂՁՆՈՒՏԻ ՎԱՆՔԻ ՎԻՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

- * 1. Գլխավոր եկեղեցու ներսում, հյուսիսային պատի մեջ բացված լուսավորող աջ, մի քարի վրա.

ԶԵ Շ

ՄՆԹ. Առաջին և երրորդ տառերը մեծ են, մոտ 35 սանտիմետր բարձրությամբ, իսկ երկրորդ տառը փոքր է և տեղավորված Զ-ի մեջ:

- * 2. Գլխավոր եկեղեցու մուտքին կից, հյուսիսային կողմում գտնվող պատվանդանի վրա եղած մեծ փաշքարի վրա.

Ա. Խաչի շուրջը, սկսած աջակողմի ցածից.

1. Աւհնեալ է ամէնասուրբ և ամէն աւհն-
2. ե(ա)լ խորհուր[դ] փրկագոր-
3. ծ շարչա-
4. բանաց խաչե-
5. լոյն: Քի Այ մերո ի ծագ[լէ մի]-
6. նչն ի ծագս ա-շխարհի ծա-
7. գին որ ոչ հատ և ոչ վնար
8. [ոյն (ի) բարձող է Յի քափչ ամէն մեղաւորի մեզ բարեխ(աւս)

Բ. Խաչքարի ճակատին.

9. էին Այ գաւրոքք յաշխա[րհակալութե].....
10. և յիշխանութե ամիր սպասալար Աքաբա[կ]... [ես Ա.]
11. ռաֆելս նուստ սպասաւոր բանին [Այ]..... [յերկր]-
12. էն Կիլիկո ի գաւառէն Տարսուէի կամ[ակցութե]....

Գ. Խաչի աջ թևի տակ.

13. այս շինեց-
14. աք գէկեղեց-
15. իս ամենայն պա-
16. տրաստութե:
17. և զգափքս և կան-
18. զնեցաք զսբ նշ-
19. աւս Ածընկալ ի
20. նեղ ժամանակի դա-
21. ռն աշխատութե
22. [բարեխ]աւս մեզ
23. [և] ծնողաց մ[ե]լ-

Դ. Խաչի ձախ թևի տակ.

24. [rəg] //
25. /// ւ պարոնին
26. և գաւակաց ն-
27. որա որ եղև ծ-
28. եռ[ն]տու և միփք-
29. ար կեւաց մերոց
30. յ[ա]րքէպիսկոպո-
31. սութե Հաղբաւ-
32. ա տր Յովանես[ի]
33. որ է նեզ և մարդաս-
34. էր և մեր յոյս

Ե. խաչքարի ձախ կողմի վրա.

35. ալ.....
36. դովր..... [բ]-
37. նակիչք ս[բ ուխ]-
38. տիս կատարեն մե-
39. գ : Դ : ար պատ-
40. արագ զամէն է-
41. կեղեցիք Ծ-
42. նրն[դ]ն [ա]ն . Ը . աւր-
43. եակին [կատարի]-
44. չքն արհնիւն
45. յԱյ : քէ ո-
46. ք յէկեղէց-
47. ոյս իրաց պ-
48. ակասէցնէ
49. ի մեծաց կ[ամ]
50. [ի փ]ոքունց ն-
51. ո.....
52. ո.....
53. [ի] Տէ....
54. ՉԻԳ.....

- ՆՆԹ. 1. Այն բոլոր տեղերում, որտեղ կետեր են դրված, կամ անկյունավոր փակագծերի մեջ առնված, քարը շարդված է և փշուրները շեն դրնվել:
2. Անկյունավոր փակագծերի միջի վերժանութունը լրացված է վերապաթյամբ:
3. 11-րդ շարքի վերջին բառը, որի «էն» վերջավորութունը մնացել է հաջորդ շարքի սկզբում, հավանաբար պիտի լինի «լերկրէն» կամ «յաշխարհէն»:
4. 13-րդ և նույն գծի վրա գտնվող 24-րդ շարքերից առաջ թերևս մեկական շարք պակասում է, շարդվածքի հետևանքով:
5. 24-րդ և 25-րդ շարքերում դրված շեղ գծերի տեղերում մնացել են տառամասեր, որոնք կարելի է վերժանել «արտառառ», կամ «Արտառի նախ», որից հետո պետք է եղած լինի «պարտն»ի. անունը, որից վերջին «ւ» տառն է մնացել:
6. 42-րդ և 43-րդ շարքերում հասարակ տառերով բառերի տեղում մնացած տրոշ տառամասեր թույլ են տվել մեզ ենթադրաբար և վերապահությամբ դնել «արեակին», որը նախորդ՝ կետերի մեջ առնված՝ «Ը» տառի հետ կկարդացվի «ութարեակին»:
7. Վերջին՝ 54-րդ շարքի «ՉԻԳ» տառերն ընդունել ենք իբրև թվական, որի վերջին տառը կարելի է և «Դ» համարել, որով կստացվի ՉԻԳ կամ ՉԻԴ թվականը:

* 3. Նույն խաչքարի աջ և ձախ թևերից վերև, փոքր խաչերի թևերի մեջ.

1. ք ⁽⁻⁾ Ս	Ա ⁽⁻⁾ Մ
2. Ողորմ	դոս
3. ի Պաւ	ոյ

....	
Ողորմի	Քաղաքին

ՆՆԹ. Երկրորդ խաչի վերին մասը շարդված է:

* 6. Ժամատան արևմտյան պատի հարավային մասի կենտրոնում, դրսից, մի պարզ խաչի թևերի մեջ.

1. Յիշեա	Քս Ած
2. զՀո	ռումշ-
3. առ հո	ողոր-
4. մեա	
5. ի քու	մ գա-
6. լքստ	եախդ
7. ամեն	

* 7. Ժամատան արևմտյան պատի հյուսիսային մասում, մուտքին կից, դրսից.

1. Տր Ած ողորմեա:
2. Կոստանտին ի քու-
3. մ գալքստեանդ:

* 8. Ժամատան հարավային պատի կենտրոնում, դրսից.

ՅԱՅ

* 9. Ժամատան ներսում, կոտրված փոքր խաչքարի ճակատին.

1. + կաման Այ ես արեւշատ...

2. 

Մեթ. «Արեւշատ» անվան վերջին չորս տառերը հողմահարված են, վերծանված է վերապահությամբ, տառերի վերին մասերի հետքերով:

* 10. Ժամատան կենտրոնում, գետնից բարձր, գլխի կողմից և հարավային եզրից կոտրված մի՝ ավազաքարից պատրաստված՝ տապանաքարի վրա, խոշոր՝ 20 սանտիմետր երկարությամբ՝ իրար հագցված գեղեցիկ տառերով.

1. Այս արձան : մեակնա շիրիմ հանգ-
2. ստարան : է : Առի : հրչակաւոր վղալի

Մեթ. 1. Առաջին շարքում «արձան» բառի սկզբի «ա» տառին հատուկ ցածի գծիկը պակասում է:

2. «Առի» կրճատ անունը վերծանում ենք «Առաքելի»:

* 11. Ժամատան մեջ, եկեղեցու մուտքի դիմաց, հատակին համասար ճինգ տապանաքարերից կենտրոնում եղածի վրա.

Սանայ իշխան(ն)

* 12. Եկեղեցու ներսում, հարավային ցածի խորանի ճակատին, երեք հատ փոքր խաչերի մեջ.



